ՀՀ Սփյուռքի նախարարությունը, հետևելով վերջին տարիներին ձևավորված ավանդությանը, կրկին իր օգնությունը տրամադրեց վիրահայոց համայնքներին, այդ թվում Բաթումի Ալեքսանդր Մանթաշովի անվան կրթության, մշակութային և երիտասարդության կենտրոնին: Նախարարության կողմից կենտրոնին հատկացվեցին տեսա-լսողական սարքավորում, բարձրախոսներ, համակարգիչ, տպիչ և տեխնիկական այլ միջոցներ:

Նվիրված տեխնիկան հասցեատիրոջը փոխանցվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի կողմից: Այս առիթով Թեմական առաջնորդը 2016 թվականի դեկտեմբերի 2-4-ը գտնվում էր Բաթումիում: Սրբազան հայրը հանդիպեց «Ալ. Մանթաշով» կենտրոնի ուսուցչական կազմի հետ՝ տնօրեն Սոնա Հովհաննիսյանի գլխավորությամբ, ականատես եղավ կատարված աշխատանքներին, գնահատանքի արժանացրեց անձնակազմի իրականացրած աշխատանքները և առաջնորդարանի կողմից մանկավարժներին փոխանցեց նվերներ:

Այցի շրջանակներում Սրբազան Հայրը հանդիպեց նաև ծխական խորհրդի անդամների հետ:

Սրբազանն իր օրհնությունը փոխանցեց Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու, Աջարիայի, Գուրիայի և Իմերեթիի հայության հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանին՝ կատարված աշխատանքների համար և խրախուսեց շարունակել այդ աշխատանքները համայնքի և կենտրոնի հետ համատեղ՝ ի նպաստ եկեղեցու շուրջ հայության կենտրոնացման և հավատացյալների թվի ավելացման:

Տեր Վազգեն եպիսկոպոսը նաև մասնակցեց եկեղեցական արարողություններին: Դեկտեմբերի 3-ին Գերաշնորհ առաջնորդն իր մասնակցությունը բերեց Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակին նվիրված առավոտյան ժամերգությանը և հավատացյալներին փոխանցեց օրվա խորհրդի մասին հոգևոր պատգամը:

Դեկտեմբերի 4-ին, Բաթումի «Սուրբ Փրկիչ» հայոց եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Հընթացս Սուրբ Պատարագի, Վազգեն Սրբազանը Հայրական օրհնություն և հոգևոր խոսք փոխանցեց հավատացյալներին և իր ուրախությունը հայտնեց հոգևոր հովվի, կենտրոնի մանկավարժների և ծխական խորհրդի անդամների համատեղ աշխատանքների արդյունքում տեսնելով եկեղեցում բազմաթիվ հավատացյալների ներկայությունը:

Հավարտ Սուրբ Պատարագի, թեմական առաջնորդն իր խոսքում երախտագիտություն հայտնեց ՀՀ Սփյուռքի նախարարությանը՝ նախարար Հրանուշ Հակոբյանի գլխավորությամբ, ով մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում վիրահայ համայնքի երիտասարդության կրթա-մշակութային հարցերը: Թեմական առաջնորդն իր գնահատանքը բերեց Բաթումի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու հոգևոր հովվին, ծխական խորհրդի անդամներին և «Ալեքսանդր Մանթաշով» կենտրոնի աշխատակազմին՝ հոգենվեր և ազգապահպան աշխատանքների համար:

Բաթումի կատարած ուղևորության ժամանակ Վիրահայոց թեմի առաջնորդին ուղեկցում էին Թեմի վարչա-տնտեսական բաժնի տնօրեն Կարեն Երիցյանը և Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովվի օգնական Գևորգ սարկավագ Անտոնյանը:

Վիրահայոց թեմի Բաթումի Ալ. Մանթաշովի անվան կրթա-մշակութային և երիտասարդության կենտրոնի շենքը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության

կառավարության, ի մասնավորի Սփյուռքի նախարարության նյութական աջակցությամբ, վերանորոգման աշխատանքները կատարվել են Ձինիշյան հիմնադրամի հովանավորությամբ, իսկ ներքին հարդարումը և գույքը ձեռք է բերվել Վրաստանի կառավարության տրամադրած միջոցներով և Վիրահայոց թեմի առաջնորդարանի ու Սուրբ Փրկիչ եկեղեցու ծխական համայնքի աջակցությամբ: